



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2005թ. երրորդ եռամսյակում /վերլուծություն/

2005թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 37186 գործարքներ, որոնց քանակը 2004թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 50.0%-ով, իսկ 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 25.4%-ով, որը հիմնականում պայմանավորվել է 2005թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի օրինականացման գործընթացի ակտիվացմամբ, մասնավորապես ինքնական կառուցված 10606 միավոր շենքերի, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցմամբ:

2005թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 10759 օտարման գործարքների 86.8%-ը կազմել են առուվաճառքները, 12.8%-ը՝ նվիրատվությունները և 0.4%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 42.0%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 42.1%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2005թ. երրորդ եռամսյակում, 2004թ. երրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 5.4%-ով, իսկ 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 1.2%-ով: 2005թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 3704 առուվաճառքի գործարքների 63.4%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2004թ. երրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 7.0%-ով, իսկ 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 5.5%-ով:

2005թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. երրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
		երրորդ եռամսյակ 2004թ.	երրորդ եռամսյակ 2005թ.	երկրորդ եռամսյակ 2005թ.
Կենտրոն	159000.0-440800.0	245100.0	298200.0	270900.0
Արաբկիր	113600.0-318100.0	192900.0	243700.0	228900.0
Քանաքեռ-Զեյթուն	90900.0-227200.0	118300.0	149300.0	139000.0
Նոր-Նորք	90900.0-190800.0	101700.0	145000.0	128200.0
Ավան	81800.0-159000.0	97900.0	127700.0	119200.0
Էրեբունի	72700.0-181800.0	94700.0	127700.0	112800.0
Շենգավիթ	72700.0-204500.0	112300.0	152700.0	136300.0
Դավթաշեն	90900.0-204500.0	121500.0	154000.0	138700.0
Աջափնյակ	90900.0-204500.1	110800.0	146500.0	133500.0
Մալաթիա-Սեբաստիա	90900.0-204500.2	110100.0	140700.0	130000.0
Նուբարաշեն	54500.0-113600.0	42100.0	77900.0	64000.0
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	<b>54500.0-440800.0</b>	<b>122500.0</b>	<b>160300.0</b>	<b>145600.0</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. երրորդ եռամսյակում, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների եռամսյակային աճը կազմել է 10.1%, իսկ տարեկան աճը՝ 30.9%:

2005թ. երրորդ եռամսյակում Երևանում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

2005թ. երրորդ եռամսյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1307 բնակարաններ, որոնց քանակը 2004թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել է 6.3%-ով, իսկ 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել՝ 0.3%-ով:

2005թ. երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. երրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
			երրորդ եռամսյակ 2004թ.	երրորդ եռամսյակ 2005թ.	երկրորդ եռամսյակ 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	36400.0-72700.0	34100.0	48100.0	43400.0
	Ապարան	13600.0-27300.0	19100.0	21500.0	19900.0
	Թալին	11400.0-25000.0	16500.0	21100.0	19300.0
Արարատ	Արտաշատ	25000.0-50000.0	29200.0	36300.0	34000.0
	Մասիս	36400.0-68200.0	32000.0	48300.0	38900.0
	Վեդի	22700.0-45400.0	22100.0	30800.0	20300.0
	Արարատ	20400.0-45400.0	20900.0	34400.0	25100.0
Արմավիր	Վաղարշապատ	50000.0-95400.0	50800.0	71600.0	68300.0
	Արմավիր	27300.0-59100.0	32100.0	42500.0	39100.0
	Մեծամոր	18200.0-36400.0	16900.0	23200.0	21000.0
Գեղարքունիք	Սևան	18200.0-40900.0	18100.0	28600.0	22100.0
	Գավառ	13600.0-29500.0	17400.0	20400.0	18100.0
	Մարտունի	22700.0-68200.0	18600.0	34100.0	21300.0
	Վարդենիս	9100.0-25000.0	9100.0	18000.0	10900.0
	Ճամբարակ	5900.0-20400.0	9300.0	9800.0	9100.0
Լոռի	Վանաձոր	27300.0-47700.0	32400.0	38500.0	34900.0
	Ստեփանավան	15900.0-29500.0	18900.0	21500.0	20800.0
	Սյիտակ	18200.0-45400.0	20100.0	24600.0	22700.0
	Ալավերդի	9100.0-22700.0	13700.0	17300.0	14900.0
	Տաշիր	11400.0-25000.0	13200.0	19400.0	18200.0
	Թումանյան	4100.0-11400.0	4900.0	5200.0	5000.0
	Շամլուղ	2300.0-8400.0	2800.0	2800.0	2700.0
	Ախթալա	6800.0-16100.0	10200.0	10400.0	10200.0
Կոտայք	Արովյան	45400.0-90900.0	50500.0	74500.0	64700.0
	Նոր Հաճն	40900.0-63600.0	34600.0	53900.0	44300.0
	Բյուրեղավան	22700.0-50000.0	23500.0	33700.0	31400.0
	Եղվարդ	31800.0-59100.0	25700.0	45100.0	38500.0
	Հրազդան	20400.0-40900.0	21000.0	27500.0	26100.0
	Ծաղկաձոր	18200.0-68200.0	44500.0	53600.0	50800.0
	Չարենցավան	25000.0-38600.0	20900.0	33900.0	28300.0
Շիրակ	Գյումրի	27300.0-54500.0	38700.0	40500.0	37800.0
	Արթիկ	15900.0-31800.0	16300.0	24300.0	19900.0
	Մարայիկ	8200.0-31800.0	14700.0	21000.0	15700.0
Սյունիք	Գորիս	20400.0-59100.0	19200.0	42200.0	33200.0
	Կապան	22700.0-36400.0	17600.0	30500.0	26200.0
	Սիսիան	18200.0-40900.0	18300.0	25500.0	23600.0
	Մեղրի	13600.0-34100.0	13200.0	20600.0	19100.0

	Ազարակ	9100.0-27300.0	13100.0	17300.0	15600.0
	Քաջարան	9100.0-22700.0	10300.0	16500.0	12200.0
	Դաստակերտ	4500.0-11400.0	6600.0	6400.0	6300.0
Վայոց Ձոր	Վայք	13600.0-36400.0	19900.0	27500.0	22400.0
	Եղեգնաձոր	25000.0-59100.0	25700.0	39800.0	34300.0
	Ջերմուկ	36400.0-81800.0	25800.0	43200.0	37600.0
Տավուշ	Դիլիջան	18200.0-50000.0	22200.0	31400.0	28500.0
	Իջևան	27300.0-72700.0	26600.0	35800.0	33000.0
	Բերդ	18200.0-45400.0	16500.0	25000.0	23800.0
	Նոյեմբերյան	9100.0-22700.0	14400.0	14000.0	12400.0

2005թ. երրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների եռամսյակային աճը կազմել է 15.2%, տարեկան աճը՝ 40.9%:

2005թ. երրորդ եռամսյակում հանրապետության մարզերում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

2005թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1314 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 362, մյուս մարզերում միասին վերցրած՝ 952: 2004թ. երրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 3.4%-ով, ընդ որում Երևան քաղաքում աճել է 2.5%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ նվազել է 5.5%-ով: 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 10.1%-ով, ընդ որում Երևանում՝ 7.4%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 11.1%-ով:

2005թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. երրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
		Երրորդ եռամսյակ 2004թ.	Երրորդ եռամսյակ 2005թ.	Երկրորդ եռամսյակ 2005թ.
Կենտրոն	136300.0-908800.0	247200.0	323900.0	297300.0
Արաբկիր	90900.0-454400.0	199200.0	260200.0	237100.0
Քանաքեռ-Զեյթուն	68200.0-272600.0	118700.0	155700.0	142100.0
Նորք-Մարաշ	90900.0-454400.0	175900.0	180000.0	168900.0
Ավան	90900.0-363500.0	98900.0	134500.0	122100.0
Էրեբունի	68200.0-227200.0	96500.0	132400.0	115200.0
Շենգավիթ	68200.0-204500.0	112700.0	155100.0	138700.0
Դավթաշեն	90900.0-409000.0	122000.0	159500.0	144300.0
Աջափնյակ	68200.0-272600.0	111700.0	154100.0	137300.0
Մալաթիա-Սեբաստիա	68200.0-409000.0	111100.0	145100.0	134200.0
Նուբարաշեն	36400.0-113600.0	42600.0	85300.0	66500.0
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	<b>36400.0-908800.0</b>	<b>130600.0</b>	<b>171500.0</b>	<b>154900.0</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. երրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գինը, եռամսյակային աճը կազմել է 10.7%, տարեկանը 31.3%:

2005թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

2005թ. երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. երրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
			երրորդ եռամսյակ 2004թ.	երրորդ եռամսյակ 2005թ.	երկրորդ եռամսյակ 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	27300.0-81800.0	44700.0	49400.0	46000.0
	Ապարան	13600.0-36400.0	20300.0	23100.0	20800.0
	Թալին	13600.0-36400.0	17600.0	22800.0	20300.0
Արարատ	Արտաշատ	22700.0-50000.0	32300.0	37600.0	35000.0
	Մասիս	22700.0-68200.0	33000.0	49700.0	39800.0
	Վեդի	13600.0-40900.0	24700.0	32000.0	22600.0
Արմավիր	Արարատ	13600.0-45400.0	22000.0	35500.0	26200.0
	Վաղարշապատ	36400.0-81800.0	51900.0	72800.0	69300.0
	Արմավիր	22700.0-59100.0	32500.0	44200.0	40000.0
Գեղարքունիք	Սևան	9100.0-40900.0	19700.0	30700.0	23200.0
	Գավառ	9100.0-36400.0	20700.0	21600.0	19400.0
	Մարտունի	13600.0-45400.0	19900.0	35800.0	22600.0
	Վարդենիս	9100.0-31800.0	11100.0	20100.0	12400.0
	Ճամբարակ	4500.0-22700.0	10500.0	11000.0	10900.0
Լոռի	Վանաձոր	22700.0-50000.0	36400.0	39700.0	36200.0
	Ստեփանավան	13600.0-36400.0	20600.0	26800.0	26200.0
	Սպիտակ	13600.0-36400.0	20800.0	25900.0	23500.0
	Ալավերդի	9100.0-31800.0	14300.0	18300.0	16000.0
	Տաշիր	9100.0-31800.0	13500.0	20700.0	19200.0
	Թումանյան	4500.0-18200.0	5500.0	6600.0	6400.0
	Շամլուղ	2300.0-13600.0	3800.0	4100.0	4000.0
	Ախթալա	9100.0-22700.0	11200.0	11900.0	11000.0
Կոտայք	Աբովյան	31800.0-90900.0	50900.0	77100.0	65600.0
	Նոր Հաճն	18200.0-68200.0	35100.0	55500.0	45400.0
	Բյուրեղավան	18200.0-45400.0	23700.0	35300.0	32300.0
	Եղվարդ	22700.0-63600.0	26400.0	47700.0	39500.0
	Հրազդան	18200.0-40900.0	21900.0	29700.0	27700.0
	Ծաղկաձոր	31800.0-68200.0	47600.0	55700.0	53600.0
	Չարենցավան	18200.0-45400.0	21200.0	36400.0	29600.0
Շիրակ	Գյումրի	27300.0-59100.0	47600.0	43300.0	42300.0
	Արթիկ	9100.0-40900.0	17000.0	26400.0	20900.0
	Մարալիկ	13600.0-36400.0	15300.0	23100.0	16600.0

Սյունիք	Գորիս	18200.0-59100.0	19700.0	43400.0	34100.0
	Կապան	13600.0-40900.0	18300.0	32500.0	27200.0
	Սիսիան	9100.0-40900.0	18700.0	27200.0	23600.0
	Մեղրի	13600.0-36400.0	14600.0	22400.0	19900.0
	Ագարակ	9100.0-36400.0	14600.0	19200.0	16400.0
	Դաստակերտ	4500.0-18200.0	7800.0	8300.0	7500.0
Վայոց Ձոր	Վայք	9100.0-36400.0	20300.0	29100.0	23300.0
	Եղեգնաձոր	18200.0-59100.0	26000.0	42100.0	35300.0
	Ջերմուկ	13600.0-40900.0	23000.0	29700.0	27700.0
Տավուշ	Դիլիջան	13600.0-45400.0	23900.0	33100.0	32000.0
	Իջևան	18200.0-45400.0	27300.0	37100.0	33700.0
	Բերդ	9100.0-40900.0	16700.0	26000.0	24500.0
	Նոյեմբերյան	9100.0-31800.0	16000.0	14400.0	13900.0

2005թ. երրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գինը, եռամսյակային աճը կազմել է 15.4%, տարեկանը՝ 37.9%:

2005թ. երրորդ եռամսյակում հանրապետության մարզերում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

Ընդհանուր առմամբ, 2005թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 3587.41 հա /այդ թվում 85.53 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 3325.56 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում, 3509.85 հա հողերի /այդ թվում 81.76 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 3257.76 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Վաճառվել են նաև 17 միավոր /13.74 հա/ արդյունաբերական օբյեկտների հողեր, ինչպես նաև 6 միավոր /7.49 հա/ հատուկ պահպանվող տարածքի հող:

Օտարված 76.74 հա /այդ թվում 3.14 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 67.79 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 0.83 հա /այդ թվում 0.63 հա Երևանում/ բնակավայրերի հողերի նկատմամբ իրականացվել են փոխանակության գործարքներ:

Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 2241.38 հա, որից 2216.02 հա գյուղատնտեսական նշանակության են:

Քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն	<b>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</b>						<b>Մասնավոր սեփականություն հանդիսացող</b>					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	78	41.17	38	10.50	0	0.00	258	24.83	31	5.26
Արագածոտն	18	194.00	0	0.00	4	0.03	139	70.72	102	10.93	1	0.01

Արարատ	112	303.67	108	10.10	29	1.61	194	93.35	162	15.04	1	0.004
Արմավիր	236	1734.04	7	0.92	10	0.29	221	481.97	125	11.21	2	0.06
Գեղարքունիք	8	29.00	11	1.07	3	0.25	26	16.58	30	4.21	3	0.95
Լոռի	0	0.00	0	0.00	2	0.004	51	34.65	20	2.47	4	0.04
Կոտայք	40	53.73	0	0.00	9	2.95	253	97.55	408	63.89	13	8.01
Շիրակ	17	4.76	23	0.92	12	0.27	29	45.20	35	2.40	1	0.01
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	23	21.73	3	0.27	0	0.00
Վայոց Ձոր	5	30.50	0	0.00	5	3.51	14	10.02	12	1.61	0	0.00
Տավուշ	11	16.39	11	0.83	5	4.02	32	19.89	10	1.21	0	0.00
<b>Ընդամենը</b>	<b>447</b>	<b>2366.09</b>	<b>238</b>	<b>55.01</b>	<b>117</b>	<b>23.43</b>	<b>982</b>	<b>891.66</b>	<b>1165</b>	<b>138.07</b>	<b>56</b>	<b>14.34</b>

2005թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են 3028 միավոր հողերի առուվաճառքի գործարքներ /2004թ. երրորդ եռամսյակում՝ 2803/, այդ թվում՝ 1429-ը՝ գյուղատնտեսական նշանակության /1217/, 1576-ը՝ բնակավայրերի /1577/, 17-ը՝ արդյունաբերական օբյեկտների /8/, 6-ը՝ հատուկ պահպանվող տարածքների հողերի նկատմամբ /1/:

2005թ. երրորդ եռամսյակում հողերի առուվաճառքներից 743 միավորը իրականացվել են աճուրդների միջոցով, /2004թ. երրորդ եռամսյակում՝ 710/, այդ թվում՝ 73-ը՝ /44.41 հա/ Երևանում /303/, իսկ 670-ը՝ /2355.64 հա/ մյուս մարզերում /407/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 443 միավորը /2333.00 հա/ հանդիսացել են գյուղատնտեսական նշանակության /2004թ. երրորդ եռամսյակում՝ 224/, 216-ը՝ /51.98 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /427/, 77-ը՝ /14.60 հա/ հասարակական կառուցապատման /58/, և 7-ը՝ /0.46 հա/ արդյունաբերական օբյեկտների /1/ հողեր:

2005թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրված 1429 միավոր գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքներից 443-ը իրականացվել են աճուրդների, 8-ը՝ դատարանի վճիռների և 4-ը՝ ուղղակի վաճառքների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	18	194.00	34.1	799.7	170.9	111	38.8	363.5	6816.0	1927.9
Ապարան						11	4.70	90.9	772.5	297.4
Թալին						11	18.74	90.9	763.4	246.0
Ծաղկահովիտ						6	8.47	77.2	954.2	132.9
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	8	6.34	108.5	10137.7	1736.7	73	28.01	336.3	5452.8	1077.7
Մասիս	28	39.85	33.2	1931.5	525.5	59	21.62	181.8	6816.0	1293.8
Վեդի	73	224.80	19.9	1484.1	163.2	59	42.71	204.5	4544.0	768.4
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	45	100.35	8.9	930.3	377.3	89	71.17	295.4	4089.6	664.1
Բաղրամյան	126	1507.60	19.9	595.3	147.6	33	364.15	90.9	681.6	384.9
Վաղարշապատ	65	126.09	11.4	5461.9	499.4	97	46.05	445.3	9088.0	1141.0

Գեղարքունիքի մարզ										
Գավառ								190.8	499.8	294.3
Ճամբարակ	8	29.00	133.7	949.7	472.3	2	4.00	45.4	545.3	114.7
Մարտունի						13	1.96	45.4	1817.6	419.7
Սևան						1	0.10	45.4	454.4	174.3
Վարդենիս						10	10.52	27.3	536.2	166.1
Լոռու մարզ										
Այվերդի						19	9.48	163.6	2499.2	336.5
Գուգարք						2	1.18	227.2	2726.4	846.7
Սպիտակ						2	0.20	227.2	1499.5	470.9
Ստեփանավան						18	12.50	90.9	2272.0	264.2
Տաշիր						10	11.29	45.4	454.4	166.0
Կոտայքի մարզ										
Արմավյան						139	36.41	272.6	11360.0	2708.0
Եղվարդ						96	41.99	172.7	11360.0	1861.1
Հրազդան	40	53.73	104.5	388.5	187.1	16	18.40	113.6	2726.4	631.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	0.02	1650.2	1650.2	1650.2	13	12.64	249.9	1704.0	351.7
Ամասիա						4	9.63	36.4	238.6	86.0
Անի						3	1.67	109.1	363.5	179.6
Աշոցք						3	14.97	45.4	113.6	92.1
Արթիկ	15	4.33	179.8	1049.9	749.6	6	6.30	63.6	1090.6	149.5
Սյունիքի մարզ										
Գորիս						16	6.83	90.9	727.0	280.8
Կապան								54.5	908.8	203.8
Մեղրի								181.8	1926.7	407.5
Սիսիան						7	14.81	45.4	681.6	172.1
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	30.50	117.6	202.2	173.8	9	3.49	118.1	2726.4	1157.7
Վայք						4	6.38	54.5	1545.0	452.8
Տավուշի մարզ										
Բերդ						2	1.48	45.4	908.8	307.9
Իջևան	11	16.39	316.7	520.3	399.3	6	6.11	240.8	1817.6	739.6
Նոյեմբերյան						24	12.29	45.4	3789.7	372.8

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծ լինելը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2005թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրված 1067 միավոր բնակելի կառուցապատման հողերի առուվաճառքներից 159-ը իրականացվել են աճուրդների, 1-ը՝ ուղղակի վաճառքի և 11-ը՝ դատարանի վճիռների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Աշտարակ						95	97066.0	113.6	3635.2	1909.6



Ապարան						4	6810.0	113.6	636.2	158.5
Թալին						1	2200.0	45.4	363.5	67.9
Ծաղկահովիտ								45.4	363.5	63.4
Արարատի մարզ										
Արտաշատ	38	43171.0	37.7	431.7	224.3	30	33622.6	136.3	2726.4	707.9
Մասիս	60	46907.0	252.5	1897.0	737.4	101	84613.0	136.3	9088.0	874.1
Վեդի	9	10800.0	254.7	261.4	259.2	30	31197.0	113.6	999.7	507.2
Արմավիրի մարզ										
Արմավիր	7	9200.0	92.2	159.0	149.8	28	31693.8	136.3	2272.0	810.7
Բաղրամյան						2	2400.0	81.8	272.6	104.1
Վաղարշապատ						93	76195.0	136.3	4544.0	1147.3
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						6	7397.0	136.3	908.8	300.4
Ճամբարակ	5	4150.0	99.1	154.5	115.4			45.4	136.3	72.4
Մարտունի	4	4000.0	57.6	115.2	85.5	8	12110.0	90.9	454.4	144.9
Սևան	2	2520.0	344.8	347.1	345.8	2	2340.0	90.9	908.8	117.7
Վարդենիս						14	20262.0	45.4	227.2	63.4
Լոռու մարզ										
Արավերդի								68.2	272.6	95.1
Գուգարք						12	12783.0	68.2	2362.9	454.4
Սյիտակ						4	6580.0	63.6	454.4	99.6
Ստեփանավան						2	1750.0	45.4	272.6	72.4
Տաշիր								45.4	136.3	61.1
Կոտայքի մարզ										
Աբովյան						171	146260.0	136.3	6816.0	1420.4
Եղվարդ						190	446923.0	136.3	6816.0	1533.6
Հրազդան						43	42451.0	136.3	9088.0	970.7
Շիրակի մարզ										
Ախուրյան	10	4672.3	175.2	1679.0	762.6	31	16506.9	113.6	1545.0	261.9
Ամասիա								45.4	136.3	61.1
Անի						1	3900.0	68.2	181.8	83.8
Աշոցք								40.9	136.3	54.3
Արթիկ	13	4536.0	38.6	899.7	401.9	3	3610.0	68.2	931.5	116.3
Սյունիքի մարզ										
Գորիս						2	2250.0	68.2	545.3	197.8
Կապան								68.2	636.2	185.6
Մեղրի								68.2	409.0	104.1
Միսիան						1	490.0	68.2	409.0	117.7
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						10	12733.0	68.2	1136.0	203.8
Վայք						2	3330.0	77.2	636.2	101.9
Տավուշի մարզ										
Բերդ								45.4	636.2	77.0
Իջևան	11	8250.0	219.3	221.3	220.3	10	12109.0	68.2	1363.2	312.4
Նոյեմբերյան								45.4	636.2	95.1

2005թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 28 գործարքներ 7.90 հա մակերեսով, ընդ որում 1-ը՝ Արագածոտնի /0.12 հա/, 21-ը՝ Արարատի /4.97 հա/, 1-ը՝ Լոռվա /1.10հա/, 2-ը՝ Սյունիքի /0.16հա/ և 3-ը՝ Շիրակի /1.67 հա/ մարզերում:

2005թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2696 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.3%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 41.4%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. երրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 16.4%-ով, իսկ 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 15.5%-ով:

2005թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 96 բնակարանների, 51 անհատական բնակելի տների, 638 հասարակական, 56 արտադրական նշանակության օբյեկտների, 1852 միավոր հողերի, 3 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Այգետնակի վարձակալության գործարք չի գրանցվել:

2005թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 107 վարձակալության գործարքների քանակը 2004թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել է 50.2%-ով, իսկ 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 25.9%-ով:

2005թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալվել են 6385.42 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում՝ 20.70 հա Երևանում/: Մյուս մարզերում վարձակալված հողերից 6093.10 հա կազմում են գյուղատնտեսական /որից 460.00 հա նախկին պահուստային/, 68.54 հա բնակավայրերի, 0.15 հա անտառային, 91.92 հա արդյունաբերական օբյեկտների, 26.51 հա էներգետիկայի օբյեկտների, 37.25 հա ընդերքի օգտագործման համար նախատեսված, 5.14 հա տրանսպորտի օբյեկտների, 42.11 հա հատուկ պահպանվող տարածքների հողեր հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 1233.05 հա, որից 1227.21 հա գյուղատնտեսական նշանակության հողեր: Իսկ առավել փոքր մակերեսով հողեր վարձակալվել են Տավուշի մարզում՝ 48.04 հա, որից 28.89 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 3091.10 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Մտորև ներկայացվում է 2005թ. երրորդ եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<b>Մարզի անվանումը</b>	<b>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</b>		<b>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</b>	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր /	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	1	300.00	154	502.50
Արարատ	14	554.00	96	642.16
Արմավիր	0	0.00	23	130.90
Գեղարքունիք	9	663.50	80	194.90
Լոռի	0	0.00	71	180.97
Կոտայք	1	50.00	100	129.75
Շիրակ	4	493.00	110	689.19
Սյունիք	9	955.00	17	272.21
Վայոց Ձոր	2	75.60	37	230.55
Տավուշ	0	0.00	27	28.89
<b>Ընդամենը</b>	<b>40</b>	<b>3091.10</b>	<b>715</b>	<b>3002.02</b>

2005թ. երրորդ եռամսյակում վարձակալության գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2005թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2221 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.0%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2004թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 28.8%-ով, իսկ 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 10.7%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /48.9%/, հասարակական նշանակության օբյեկտների /20.1%/, առանձնատների /18.8%/ և հողերի /7.0%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1265 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2004թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 24.0%-ով, իսկ 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 2.8%-ով:

Ընդհանուր առմամբ, 2005թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 248.52 հա մակերեսով հողեր /այդ թվում՝ 5.80 հա Երևանում/, որից 238.42 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 153.95 հա, որից 153.09 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2005թ. երրորդ եռամսյակում գրավադրման գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2005թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 81 և 19 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.3%: 2004թ. երրորդ եռամսյակի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը աճել է 44.9%-ով, իսկ 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 51.5%-ով: 2005թ. երրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Շիրակում՝ 38.0%:

2005թ. երրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի նվազման միտում:

2005թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 5519 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2004թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 28.4%-ով, իսկ 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 2.9%-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.8%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /52.7%/: Ընդ որում առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի նվազման միտում:

### ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***